ԳՈՐԳԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՌԵՉ ՊՈՍՊՈԼԻՏԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐՈՒՄ (XVI—XVII ԴԴ.)

Ջ. Հ. ԳԱԼՍՏՅԱՆ

XVI—XVII դդ. Ռեչ Պոսպոլիտայի տարածքում գտնվող հայկական գաղութները ունեցել են շատ կողմերով հետաքրքիր քաղաքական, տնտեսական ու մշակութային կյանք. գրանցում նշանակալիորեն զարգանում էին ժողովրդական մշակույթի անկապտելի մասը կազմող դեկորատիվ-կիրառական արվեստը, գեղարվեստական արհեստագործությունը։ Հայկական այս գաղթավայրերում լայն տարածում էր գտել նաև մանածագործությունը, մասնավորապես, գորգագործությունը՝ գեղարվեստական արհեստագործության կարևոր տեսակներից մեկը։

Հայկական գորգերը Եվրոպա են սկսում ներթափանցել դեռևս XIII դ.։ Արևելյան գորգերի ներմուծումը նշանակալից չափով գերազանցում էր տեղական արտադրությունը և XVI դ. ու XVII դ. սկզբին դրանց վաճառքը Ռեչ Պոսպոլիտայում զգալի չափերի էր հասնում։ Լեհաստան առաքվող գորգերի քանակի մասին են վկայում հետևյալ տվյալները. 1600 թ. լվովաբնակ հայ վաճառական Զախար Իվաշկևիչը Կոստանդնուպոլսից Ռեչ Պոսպոլիտա էր բերել 150 գորգ՝ 775 դուկատ ընդհանուր արժողությամբ[1]։ Լվովի հայ վաճառականներ Յան Վարթերեսովիչի և Լուկաշ (Ղուկաս) Սեֆերովիչի միջև 1650 թ. կընքված պայմանագրում հիշատակված էին «պարսկական ոսկեթել մետաքսյա 24 գորգեր՝ տասներկուսը մեծ և տասներկուսը փոքր չափսերի, 15.000 լեհական զլոտի արժողությամբ»[2]։

Լեհաստանում սպառվելուց զատ, այդ գորգերը այդտեղից վաճառքի էին առաքվում դեպի Արևմուտք։ Արևելյան երկրներից հայ վաճառականների բերած թանկարժեք, ոսկեկար ու արծաթակար գորգերը սպառում էին լեհական մեծատոհմիկ ընտանիքները։ Խոշոր մագնատների գույքացուցակները վկայում են, որ լեհական շլյախտայի և մեծատոհմիկ իշխանների տների ներքին հարդարանքում լայնորեն օգտագործվում էին նաև գորգեր։ Այսպես, օրինակ, XVII դ. սկզբներին իշխան Օստրոգսկին Դուբնայի իր դղյակում ուներ երկու ոսկեկար գորգ, որ նվեր էր ստացել Պոդոլսկի վոյեվոդից, դրանցից մեկը երփներանգ էր, մետաքսյա, իսկ մյուսը՝ հնամենի ոսկեկար։ Իշխանի հավաքածուի մեջ կային նաև 11 մեծ և 38 փոքր մետաքսյա գորգեր[3]։ Լվովի արքեպիսկոպոս Յան Զամոյսկին 1603 թ. Կոստանդնուպոլսից ստացել էր 20 մեծ գորգ, որոնք նրա պատվերով պատրաստել էին, ամենայն հավանականությամբ, հայ

---

[1] „Zarys historii włokiennictwa na ziemiach polskich do konca XVIII wieku", Wrocław—Warzsawa—Krakow, 1966, էջ 206։

[2] T. Mańkowski, Sztuka Islamu w Polsce, Krakow, 1935, էջ 19։

[3] Նույն տեղում։

վարպետները (գորգերը կրում էին իշխանի տոհմանշանը)։ Հետագայում այդ գորգերը նվիրեցին Լվովի մայր տաճարին[4]։

Գորգերի հարուստ հավաքածուներ կային Կրակովի ունևոր քաղքենիների ընտանիքներում։ Նրանցից յուրաքանչյուրն ուներ մի քանի, երբեմն տասնյակ պարսկական ու թուրքական գորգեր։ Լեհ թագավորները, սովորաբար, գորգերը որպես նվեր էին ստանում, իսկ երբեմն էլ հանձնարարում էին հայ վաճառականներին Ռեչ Պոսպոլիտա բերել թանկարժեք, մետաքսյա, ոսկեկար և արծաթակար գորգեր։ Օրինակ, 1669 թ. օգոստոսի 15-ին Միխայիլ թագավորի թագադրության ժամանակ Լվովի հայերը թագավորին նվիրում են պարսկական երկու գորգ[5]։ 1585 թ. Ստեֆան Բատորին Վավելի (Կրակովի) պալատի սենյակները հարդարելու համար հայ վաճառականներին պատվիրել էր Թուրքիայում մեծ քանակությամբ որոշակի չափսերի արևելյան գորգեր գնել և այդ նպատակով նրանց տրամադրել 2.000 զլոտի[6]։ 1601 թ. լեհական Սիգիզմունդ III թագավորի համար Պարսկաստանից մեծաթիվ գորգեր էր բերել հայ հայտնի վաճառական և քաղաքական գործիչ Սեֆեր Մուրատովիչը։ Այդ հավաքածուից մի քանիսը, լեհ հետազոտող Թ. Մանկովսկու ենթադրությամբ, պահպանվել են մինչև մեր օրերը։ Դրանք Մյունխենի թանգարանում գտնվող այն երկու գորգերն են, որոնք, հավանաբար, գործվել են գորգագործության հռչակավոր կենտրոն՝ Քաշանում։ Այստեղի գորգերը ունեն հարթ գործվածք, որը հիշեցնում է եվրոպական «tapiserii» հինավուրց գործվածքը և, որը հայերին հայտնի էր վաղնջական ժամանակներից։ Այդ գորգերից մեկի կենտրոնում՝ շրջագծով պարփակված կարտուշի մեջ պատկերված են լեհական զինանշանից ընդօրինակված արծիվներ, որոնց գլխավերևում գործված է Վազա դինաստիայի տոհմանշանը[7]։ Հատկանշական է, որ լեհական զինանշանը, որի պատկերը Սեֆեր Մուրատովիչը իր հետ Պարսկաստան էր տարել, տեղացի գորգագործը կերտել է ոչ թե բարոկկո ոճով, այլ դրա արևելյան մեկնաբանությամբ։ Պիտի ենթադրել, որ Սեֆեր Մուրատովիչը շփվել է Պարսկաստանում բնակվող հայերի հետ և հենց նրանց էլ պատվիրել է լեհական թագավորի համար գորգեր պատրաստել։ Զտրդանախշերի ոճով և գործվածքի եղանակով դրանք մոտ են այդ նույն հավաքածուի երրորդ գորգին, որ գործված է առանց զինանշանի պատկերման, ոսկեգույն երանգով և մետաղաթելով, որը, ինչպես ենթադրում է Մանկովսկին, նույնպես հայթայթել և Լեհաստան է բերել Սեֆեր Մուրատովիչը։

Լեհաստանում բնակություն հաստատած հայերը ևս լայնորեն օգտագործում էին գորգեր։ Բնակարանների հարդարանքում գորգերը գործնական կիրառությունից բացի, գեղարվեստական զարդարանք էին. դրանց միջոցով դրսևորվում էր ժողովրդի տարբեր խավերի գեղագիտական ճաշակը։

Ամուսնացող աղջկա ծնողների կողմից տրվող օժիտի ընծայագրերում ոսկերչական թանկարժեք իրերի կողքին մշտապես հիշատակվում են գորգեր։ Զամոստյեցի հայ վաճառական Աբրահամ Կիրկորովիչի (1634 թ.) ժառանգների գույքացուցակում թվարկված են մի քանի, իսկ Հովհաննես Սերխիովիչի

---

[4] Նույն տեղում, էջ 20։

[5] S. Barącz, Rys dzlejów ormiańskich, Tarnopol, 1869, էջ 125։

[6] Նույն տեղում, էջ 23։

[7] T. Mankowski, Orient w polskiej kulturze artystycznej, Wrocław—Krakow, 1959. էջ 158, 173։

(1642 թ.) գույքացուցակում՝ տասից ավելի գորգեր[8]։ Այսպիսով, փաստերը վկայում են, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում Ռեչ Պոսպոլիտայում գորգերի մեծ պահանջարկ կար։

Հայկական արհեստագործության հնագույն ճյուղերից մեկը՝ գորգագործությունը լայնորեն զարգանում է բուն Ռեչ Պոսպոլիտայի հայկական գաղութներում, որտեղի հայ վարպետները արևելյան նմուշների գորգեր էին գործում։ Այսպես, 1585 թ. մայիսի 24-ի թվակիր արտոնագրով Ստեֆան Բատորի թագավորը Կաֆայից Զամոստյե վերաբնակված հայ Մուրադ Յակուբովիչին շնորհում է արևելյան տիպի գորգ-բազմոցների մենաշնորհային արտադրության իրավունք։ Ընդսմին արտոնագրում հատուկ վերապահություն էր արված. Յակուբովիչին թույլատրվում էր գորգեր արտադրելու համար հրավիրել այլ վարպետների և 20 տարով բացառիկ իրավունք էր տրվում Ռեչ Պոսպոլիտայի տարբեր քաղաքներում գորգեր վաճառելու[9]։

Յարգ սա միակ վավերագիրն է, որ հավաստում է Զամոստյե քաղաքի հայկական գաղութում գորգերի արտադրության առկայությունը։ Յավոք, արտադրանքի տեսակի, չափերի և ձևերի մասին առայժմ ստույգ ոչինչ ասել հնարավոր չէ։ Զամոստյեի գորգագործական ցեխին է վերագրվում Վավելի արվեստների պետական թանգարանում պահպանվող գորգը, որն իր կոմպոզիցիայով և դեկորատիվ մոտիվների մեկնաբանությամբ նմանվում է անատոլիական գորգերին։ Հիշյալ գորգը առնչվում է լիտվական մեծ մարշալակ Կրիշտով Վեսելովսկու (մահացել է 1637 թ.) անվան հետ[10]։ XVII դ. սկզբներին լիտվական մեծ մարշալակի արքունիքում կազմակերպվեց ձեռագործ մեծ գորգերի արտադրություն[11], որոնք, ամենայն հավանականությամբ, արտադրվում էին Մուրատ Յակուբովիչի աշակերտների կողմից։ Կասկած չի հարուցում այն փաստը, որ արևելյան զարգանախշային մոտիվներ ունեցող հիշյալ գորգը (լիտվական մեծ մարշալակի զինանշանի զուգակցմամբ) գործված կարող էր լինել միայն Ռեչ Պոսպոլիտայում՝ մեծատոհմիկ իշխանի պատվերով, հայ վարպետների ձեռքով, վարպետներ, որոնք գորգագործության արվեստի բնագավառում ունեին մեծ փորձ և ավանդույթներ։

Ռեչ Պոսպոլիտայի հայկական գորգագործության պատմության ուսումնասիրությունը դժվարանում է նրանով, որ դեկորատիվ արվեստի այդօրինակ հուշարձաններ չեն պահպանվել, իսկ այն գորգերը, որ ստեղծել էին հայ վարպետները, գրականության մեջ մտել են պարսկական և թուրքական անվանումով։ Այդ իսկ պատճառով պատմագիտական գրականության մեջ արմատավորվել է այն թյուր կարծիքը, թե իբր Ռեչ Պոսպոլիտայի հայ բնակիչները գորգագործության բնագավառում, ինչպես և դեկորատիվ արվեստի այլ տեսակներում, սոսկ պարսկական և թուրքական արվեստների ձևերի տարածողներ ու պրոպագանդողներ էին և, որ իբր նրանք ազգային կիրառական արվես-

---

[8] M. Zakrzewska-Dubasowa, Ormianie Zamojsy i ich rola w wymianie handlowej i kulturalnej między Wschodem a Polską, Lublin, 1965, էջ 276, 281։

[9] T. Mańkowski, Polskie tkaniny i hafty w XVI—XVIII w., Wrocław, 1954, էջ 69։

[10] T. Mańkowski, նշվ. աշխ., էջ 106, 186։

[11] Նույն տեղում։

տի ուրույն հուշարձաններ չեն ստեղծել։ Այդ կարծիքը արմատապես սխալ է։ Հայտնի է, որ Պարսկաստանի և Թուրքիայի գերիշխանության ներքո գտնվող հայ աղգաբնակչությունը այդ երկրների հասարակական արտադրության (այդ թվում նաև գորգագործության) մեջ նշանակալից դեր էր խաղում, բայց նրանց գործած գորգերը, որոնց պատկերների, նախշերի և զարդերի միջոցով նրանք արտահայտում էին իրենց ազգային և գեղագիտական ճաշակը, վաճառքի և արտահանության ժամանակ, այդ երկրների անունով, ստանում էին «պարսկական» և «թուրքական» անվանումը։ Դեռևս XIII դ. վերջին վենետիկցի հայտնի ճանապարհորդ Մարկո Պոլոն գրել է, որ Թուրքիայի երեք խոշոր քաղաքներում՝ Իկոնիայում, Կեսարիայում և Սեբաստիայում ամենագեղեցիկ ու նուրբ գորգերը գործում էին հայերը և հույները[12], այսինքն այն հայերը, որոնց նախնիները տակավին XI դ. գաղթել էին Հայաստանի Անի, Կարս և Վաղարշապատ քաղաքներից։ Հետևաբար, XVI—XVII դդ. Ռեչ Պոսպոլիտայում տարածված գորգերը դասակարգելու և ուսումնասիրելու ժամանակ անհրաժեշտ է ծայր զգուշություն, քանի որ չիմանալով արևելյան գորգերի ուրույն առանձնահատկությունները, հեշտությամբ կարելի է սխալվել։ Սխալից չի խուսափել նաև լեհական արվեստի պատմության այնպիսի ճանաչված մասնագետ, որպիսին է, անտարակույս, Թադեուշ Մանկովսկին։ Նա չի կարողացել իր տրամադրության տակ եղած մեծաքանակ գորգերից առանձնացնել նրանք, որոնք գործել էին հայ վարպետները։

Խնդրո առարկա հարցը ուսումնասիրելիս, առանձին գորգերի հայկական ծագումն ապացուցելու համար, մեր կարծիքով, որպես կռվան կարող են ծառայել դրանց վրայի լեհական զինանշանը, իսկ որոշ դեպքերում՝ նաև լատիներեն գրությունները։ Դրանք համոզիչ ապացույց են այն բանի, որ արևելյան գորգեր գործում էին նաև բուն Լեհաստանում, բնականաբար, հայ արհեստավորները, որոնց ձեռքին էր գտնվում գորգագործության մենաշնորհը Ռեչ Պոսպոլիտայում։ Չնայած առանձին դեպքերում լեհ ազնվազարմերի տոհմանշաններով գորգեր պատրաստվում էին նաև բուն Պարսկաստանում և Թուրքիայում, սակայն այդ այն դեպքերում, երբ հայ վաճառականներին հատուկ պատվեր էր տրվում։ Բայց այս դեպքում էլ ազնվականության պատվերների կատարումը վաճառականները հանձնարարում էին իրենց ազգակից հայ վարպետ գորգագործներին։ Սակայն «տոհմիկ» գորգերի հայթայթման այսօրինակ ուղին բարդ էր, և բնականաբար, ավելի դյուրին էր գորգեր գործել տեղում։

Այս տեսանկյունից՝ «պարսկական» կամ «փոքրասիական» անվանումով հայտնի բազում գորգերի պատմությունը կներկայանա նորովի։ Ապացուցելու համար բերենք լոկ մի օրինակ։ Շվեդիայում, մասնավոր մի հավաքածուի մեջ, հայտնաբերվել է զինանշան և գրություն ունեցող մի գորգ, որը պատկանել է XVII դ. առաջին կեսում ապրած Լվովի արքեպիսկոպոս Յան Անդրեյ Պրուխնիցկուն։ Դա մի մեծ գորգ է (2,84×1,92 մ), որի հիմնական մոտիվը տարբեր գույների թռչունների պատկերներն են։ Ուշագրավ է, որ գորգի հենց կենտրոնում զետեղված է Լվովի արքեպիսկոպոսի զինանշանը՝ Պրուխնիցկու ազգանունը և կոչումը ներկայացնող լատիներեն գրությամբ[13]։ Այդ գորգը համեմատելով կոմպոզիցիայով և թռչունների մոտիվներով ընդհանուր առ-

[12] Марко Поло. Путешествие. Л., 1940. էջ 17—18։

[13] T. Mankowski, նշվ. աշխ., էջ 177—178, 186—188։

մամբ դրան նման Յագելլոնի համալսարանի հավաքածուի չպահպանված գորգի հետ, Մանկովսկին այն որակավորում է որպես փոքրասիական գորգագործության ուրույն նմուշ, որ պատրաստվել է լեհական պատվերով։ Իսկ Յագելլոնի համալսարանի հավաքածուի նշված գորգը, որն ավելի կոպիտ գործվածք ունի և տարբերվում է մյուսից նկարով ու գունային գամմայով, հետազոտողն համարում է կիրառական արվեստի լեհական հուշարձան։

Սակայն այդ գորգերի նմանությունը ճիշտ նույն ոճավորումը («թռչունների մոտիվ») ունեցող հայկական գորգերից մեկին, որը գործվել է XVI դ. հայկական հնամենի գորգի նմուշով[14], հավաստում է «շվեդական» և «յագելլոնյան» գորգերի հայկական ծագումը։ Կարելի է ենթադրել, որ դրանցից առաջինը հատուկ պատվերով պատրաստել են հայ գորգագործները Թուրքիայում կամ նույնիսկ բուն Ռեչ Պոսպոլիտայում։

Լեհաստանում բավական տարածված էին գորգերի այն տեսակները, որոնք հայտնի են «լեհական տիպի» պարսկական գորգեր (կարճ ձևով՝ «լեհական գորգեր») անվանումով։ Մասնագիտական գրականության մեջ տարակարծություն գոյություն ունի «լեհական գորգերի» արտադրության վայրի հարցի շուրջ։ Հետազոտողներից ոմանք այդ գորգերի հայրենիքը համարում են Ռեչ Պոսպոլիտան, իսկ մյուսները ժխտում են այդ։ Վերջիններիս թվին է պատկանում նաև Մանկովսկին, որը ուշադրություն չի դարձնում ո՛չ միայն այն էական տարբերությանը, որ կա բուն Պարսկաստանում պատրաստված գորգերի և վերը նշված գորգերի միջև, այլև «լեհական գորգերը» պարսկականից զատող եվրոպական ոճի տարրերի առկայությանը։

Մանկովսկու փաստարկումները մեզ թվում են անհամոզեցուցիչ։ Ավելին, Մանկովսկու և այլ հետազոտողների կողմից բերվող փաստերը հիմք են տալիս եզրակացնելու, որ այսպես կոչված «լեհական գորգերի» հայրենիքը, ամենայն հավանականությամբ, Լեհաստանն է, իսկ դրանց արտադրողները եղել են հայ արհեստավորները, որոնք վաղուց անտի Ռեչ Պոսպոլիտայի հայկական գաղութներում զբաղվում էին գորգագործությամբ։ Ըստ Պոպեի հաշվարկումների, Եվրոպայում կային մոտ 400 նման գորգ[15]։ Ներկայումս այդ գորգերի մեծ մասը գտնվում է ամերիկյան հավաքածուներում և միայն երկուսը՝ բուն Լեհաստանում։ Եթե զննենք Լվովի գեղարվեստական արհեստագործության քաղաքային թանգարանում պահպանվող բրդյա մեծ գորգը, որ նկարագրել է Մանկովսկին[16] իր վաղ աշխատություններում, ապա կհամոզվենք, որ չնայած նրա պարսկական գորգերի հետ ունեցած նմանությանը, այն աչքի է ընկնում պարսկական գորգերից տարբերվող գույների համադրությամբ և ձևերի միանգամայն այլ ընկալմամբ, հատկապես տարբեր է եզրանախշերի ոճավորումը։ Լեհ հետազոտողի այն ենթադրությունը, թե հիշյալ գորգը գործվել է Կոնեցպոլսկիների Բրոդում գտնվող մանուֆակտուրայում, ճիշտ չէ, քանզի այն չի շաղկապվում Լեհաստանի գեղարվեստական մշակույթի XVI—XVII դդ. պատմությանը։ Հավանաբար, գորգը գործվել է Ռեչ Պոսպոլիտայում, հայ վարպետի ձեռքով, որը քաջատեղյակ լինելով պարսկական գորգերի մո-

---

[14] Վ. Թեմուրճյան, Գորգագործությունը Հայաստանում, Երևան, 1955, Հաէելված, նկ. 27։

[15] T. Mańkowski, նշվ. աշխ., էջ 176։

[16] T. Mańkowski, Sztuka Islamu w Polsce, էջ 50։

տիվներին, վերջինիս մեջ ներմուծել է ոճի, ձևի և զարդանախշի սեփական ընկալումը։

Կարծում ենք, Ռեչ Պոսպոլիտայի հայ գորգագործները պատրաստել են նաև այլ գորգեր, որոնք հայտնի են մասնագիտական գրականությունից։ Օրինակ, Գոլուխովի դղյակում պահպանվող, հիմնականում արևելյան-փոքրասիական ոճով գործված բրդյա փոքրիկ գորգը, որի կենտրոնում պատկերված է Սերակովսկիների կամ Զբոինսկիների ազնվականական տոհմանշանը, համարվում է տեղում գործված[17]։ Այս կարծիքի հետ չի կարելի չհամաձայնվել, քանի որ գորգի արևելյան բնորոշ եզրանախշերը ակնհայտորեն մատնանշում են նրա հեղինակին, որը, հավանաբար, Ռեչ Պոսպոլիտայի հայկական բնակավայրերի գորգագործներից է եղել։ Ամենայն հավանականությամբ, հայ վարպետներն են գործել նաև XVII դ., այսպես կոչված, հին լեհական մետաքսյա գորգը։ Գորգի բուսական զարդանախշը, որն ոճավորված է արևելյան եղանակով, կարմիր, երկնագույն և կանաչ գույների զուգակցությամբ, մեզ հիմք է տալիս ենթադրելու, որ հայ վարպետները այն գործել են տեղում։ Այդ գորգը պահպանվում է Լվովի Յան III-ի անվան թանգարանում[18]։

Լենինգրադի պետական էրմիտաժի Բոտկինի հավաքածուում նույնպես պահպանվում է «լեհական գորգերից» մեկը, որը իր անվանումը ստացել է գործելու վայրից։ Գորգը թվագրվում է XVI—XVII դդ.։ Գեղարվեստական առումով այն արժեքավոր է իր նուրբ ու գեղեցիկ աշխատանքի շնորհիվ։ Կոմպոզիցիան, որոշ բուսական զարդանախշերի, մոտիվների ձևն ու ոճը վկայում են գորգի հայկական ծագման մասին, չնայած կոմպոզիցիայի որոշ տարրերում (հատկապես կենտրոնում) նկատելի է եվրոպական ոճը։ Բուսական զարդանախշային մոտիվները, հիմնականում տերևային զարդանախշը, ոճավորված է և միահյուսված, պահպանելով վաղ միջնադարյան հայկական արվեստի պարզությունը և ռեալականությունը։ Հետաքրքիր է, որ զարդանախշում օգտագործված են հայկական մանրանկարային մոտիվներ։ Վարպետը, հավատարիմ մնալով հայկական ավանդությանը, զարդանախշը այնպես է տեղադրել, որ գորգը կարելի է կախել և՛ երկարությամբ, և՛ լայնությամբ՝ պահպանելով կոմպոզիցիայի համաչափությունը[19]։

Իր պատկերներով և զարդանախշերով նշված գորգին մոտ է մեկ այլ գորգ, որը նույնպես ստացել է «լեհական գորգ» անվանումը[20]։ Ռումինական մասնագետ Ս. Կասկանյանի նկարագրությամբ, գորգը գործված է մետաքսից և ունի արծաթագույն հեռանկար։ Կենտրոնում տեղադրված են սպահանյան ոճով կատարված չորս միահյուսվող վարդանախշ։ Եզրանախշերի մոտիվները հայկական են, իսկ գույները ընտրված են լեհական ճաշակով։ Նշենք, որ գորգերի գունային լուծումը պակաս նշանակություն չուներ, քանի որ այն զգացմունքային ներգործության ազդեցիկ մեթոդներից էր։ Գունային լուծու-

---

17 T. Mańkowski. Sztuka Islamu, էջ 53։

18 „Muzea gminy miasta Lwowa", Lwów, 1929, էջ 67։

19 Վ. Թեմուրճյան, նշվ. աշխ., էջ 68—69, 77—78։

20 Այս գորգի գոյության մասին մեզ տեղեկացնելու համար շնորհակալություն ենք հայտնում Սուրեն Քոլանջյանին (Sirag H. Cascanian, Covoare manuale editura tehnica, Bucureşti, 1972, էջ 84, 88)։

մը գորգագործության վարպետների արտադրական գաղտնիքն էր, որն անցնում էր սերնդից սերունդ։

Ս. Կասկանյանը, վերլուծելով հումքը, հանգել է այն եզրակացության, որ գորգը արտադրված է Լեհաստանում և այն կարող էր պատրաստել միայն հայ վարպետը։ Անհայտ վարպետը հարմարվելով լեհական հասարակության պահանջներին, գորգին հաղորդել է գունային համահնչունություն, որը բնորոշ էր լեհական ճաշակին, միաժամանակ չմոռանալով հայկական ազգային մոտիվները, որոնք համեստորեն տեղադրել է գորգի եզրերին։

Հայ վարպետների ձեռքով է պատրաստված նաև 1000 զլոտի արժողությամբ ոսկե գորգը՝ Կամենեց-Պոդոլսկ քաղաքի և պտուղների պատկերով, որը 1698 թ. օգոստոսի 20-ին մատուցվել է լեհական թագավորին[21]։ Հետաքրքիր է Լվովի գեղարվեստական արվեստների քաղաքային թանգարանի գորգը, որտեղ արևմտյան զարդանկարային ոճը զուգակցված է Արևելքի արվեստի տարրերով[22]. դա նրան հաղորդում է անկրկնելի գուներանգ և յուրատեսակություն։ Թեև գորգի վրա գործված են ծաղկազամբյուղներ և ծաղկափնջեր, սակայն եզրի պատկերում սփռված են արևելյան զարդանկարային արվեստի տարրեր[23]։ Պարզ է, որ գորգը այն ժողովրդին պատկանող վարպետի ստեղծագործություն է, որը Ռեչ Պոսպոլիտայի կազմում ներկայացնում էր արևելյան տարրը։ Անգամ արևմտյան սպառողի պահանջարկը բավարարելու համար նախատեսված իր արտադրանքում հայ արհեստավորը չի կարողացել լիովին հրաժարվել ոճի ավանդական ձևերից և ըստ հնարավորին իր լուման է ներդրել այն ժողովրդի գեղարվեստական մշակույթի մեջ, որի շրջապատում նա ապրել և ստեղծագործել է։

Այսպիսով, մենք փորձեցինք պարզել և հաստատել, որ այսպես կոչված «լեհական գորգերի» հեղինակները հայ արհեստավորներն էին։ Ռեչ Պոսպոլիտայի հայկական գաղութներում գորգագործության հետագա և առավել մանրակրկիտ հետազոտությունը մասնագետ արվեստագետների խնդիրն է։ Անկասկած, վերջին խոսքը պատկանում է նրանց։

КОВРОДЕЛИЕ В АРМЯНСКИХ КОЛОНИЯХ РЕЧИ ПОСПОЛИТОЙ (XVI—XVII вв.)

Дж. О. ГАЛСТЯН

Резюме

Армянские переселенцы в Речи Посполитой оставили значительный след в развитии ковроделия. В XVI—XVII вв. торговля восточными коврами в Речи Посполитой, благодаря армянским купцам, приобрела значительный размах. Однако ковры не только импортировались. Они ткались и в самой Польше. Многие ковры, сотканные армянскими

[21] S. Barącz, նշվ. աշխ., էջ 131։

[22] T. Mańkowski, նշվ. աշխ., էջ 54։

[23] նույն տեղում։

ковроделами, вошли в литературу под названием «персидских» и «турецких» ковров. Этот тезис ошибочен, поскольку армяне, во-первых, составляя подвластное Персии и Турции население, играли значительную роль в общественном производстве этих стран и, во-вторых, изготовляемые ими ковры, в которых посредством рисунков, орнаментов и узоров мастера-армяне выражали свое художественное миропонимание, при продаже и вывозе по традиции получали наименование персидских и турецких ковров.

В статье предпринята попытка внести уточнение относительно происхождения некоторых ковров, вошедших в специальную литературу под названием «турецких», «персидских», а также персидских ковров «польского типа». Родиной некоторых так называемых «польских ковров» окорей всего является Польша, а их производителями были ремесленники-армяне.